

4508

*Handwritten signature*

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՅՈՒՆԱՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԴԵ 21

ՄՏ. ՏԵՐ-ԱԻՆՑԻԲԵԱՆ

# ՈՒՆՏԱԻՈՐՆԵՐԸ

## ԱՆՏԱՌԻԳԻՏՏԸ

### ԵՐԿՈՒ ՊԱՏՄԻԱՍԵ

Յանքամ «ՀԱՍԿԵՐ» ամսագրի

\*\*\*000\*\*

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Յպարան Ե. Ազանեանի, Պոլիս. 7

1914

891.995

S-37

891.995

S-37 *սր*

ՍՏ. ՏԵՐ-ԱԻԵՏԻՖԵԱՆ

# Ո Ի Խ Տ Ա Ի Ո Ր Ն Ե Ր Ը

## Ա Ն Տ Ա Ռ Ի Գ Ի Ի Տ Ը

ԵՐԿՈՒ ՊԱՏՄԻԱԾՔ

Յաւելած «ՀԱՍԿԵՐ» ամսագրի

○○○○○

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան Ն. Աղանեանի, Պոլից. 7

1914

#

1004

6229

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

# ՈՒՒՏԱԻՈՐՆԵՐԸ

I

Շարան-շարան վերագառնում էին ուխտա-  
 ւորները Ամենափրկչից: Սարերով ու ձորերով  
 անցնող ուր-մուր ճանապարհը կարմրուցի էր  
 տալիս այս ու այնտեղ. ուխտաւորների շատը  
 կանայք ու երեխաներ էին, մեծ մասամբ կար-  
 մրագոյն կամ գոյնգոյն շորեր հագած: Որը ո-  
 տով էր գնում, որը ձիու, շորու կամ էշի վրա  
 նստած. շատերը ոտով էին: Չէին շտապում.  
 բաւականին օր կար դեռ: Զրուցելով, կատակե-  
 լով ու ծիծաղելով գնում էին իրենց քէփին:  
 Այս ու այն խմբի միջից երգ էլ էր լսում: Երի-  
 տասարդ տղէքը, ջահէլ հարմներն ու աղջկերքը  
 և երեխաները կանգնում էին ճանապարհին կից  
 գտնւող մի կանաչազարդ հարթ տեղ ու մի խող  
 սկսում. վազվզում, ծիծաղում մի կուշտ ու կըր-  
 կին ճանապարհ ընկնում: Տղաներից շատերը ձի  
 էին քշում կամ կրակում նշանի հրացաններից  
 ու ատրճանակներից: Զուռնաչիներ ու պիւռ ա-  
 ծողներ էլ կային ուխտաւորների մէջ: Այս սարի  
 լանջին կամ այն բլրի գագաթին մէկը յանկարծ



Գ 235  
44

400

զուսնա էր փչում. նրա ծորչին ու դհուչին \*) էլ իսկոյն իրենց անելիքն էին անում. մի ուրիշ տեղից պղւի ձայնն էր լսւում. սարերն ու ձորերը լցնւում էին արձագանքով: Նւագոյ վարպետները նւագում էին ոգևորւած, պարողները պարում ուրախ-զւարթ, մեծ հրճանքով. խըմբւում էին մի յարմար տեղ ու պարում կամ էնպէս պարելով ճամփայ գնում: Ամբողջ ճանապարհը ծափ ու ծիծաղ էր:

Ի՞նչպէս չուրախանային. Հոգեգալուստի օրն էր արդէն. մայիսն անշառ էր անցել, կարկուտ ու աւեր չէր բերել. արտերն աճել բարձրացել էին այնչափ, որ հէրանց էին գնում. ծովացել էին իսպառ. լէն ու բոլ ծովի պէս դէս ու դէն էին տատանւում: Ամեն տեղ կանաչ ու ծաղիկ, թռչունների երգ, ծառերի ծլվլոց, գառների ու ոչխարների կայտառ մայիւն. տաւարի զւարթ բառանչ: Ամենքն էլ կուշտ, առողջ, երջանիկ: Բոլորեւ վերջացել էր արդէն անչափ գեղեցիկ մի գարուն ու նրա ետևից գալիս էր ամառը, որն անկասկած շատ բարիքներ էր բերելու իր հետ:

Ահագին բազմութիւն էր գնացել այդ Հոգեգալուստի օրը Ամենափրկիչ սրբավայրը, խորը հաւատով ու բաց սրտով իր ուխտը կատարել այնտեղ, իր երախտագիտութիւնը յայտնել: Ան-

\*) Ներդաշնակող նւագածուն ու թմբկահարը:

թիւ մատաղներ էին մօրթել այնտեղ ուխտաւորները, թափօրներ կատարել ու հիմա ուրախ-զւարթ վերագառնում էին տուն:

Ճանապարհի այս ու այն կէտում տեղի էին ունենում հրաժեշտի տեսարաններ. բարեմաղթութիւններով բաժանւում էին իրարից ու ճանապարհւում այս կամ այն գիւղը: Կանայք իրար կուլաւ էին ընկնում, համբուրւում իրար հետ. ուրիշ գիւղ մարդի գնացած հարսը, բաժանելով իր հարագաններից, աղի-աղի արտասւում էր. քանիցս անգամ համբուրւում էր իր մօր, քրոջ ու փոքրիկ եղբօր հետ. քիչ էր մնում, թէ համբուրի նոյն իսկ իրենց Թաւրան Չորուն, որի վրա նստած իր աղջիկ ժամանակ նա այնքան խաչ էր գնացած, Ամենափրկիչը ամենից շատ. բարձրաձայն խօսել սակայն, նոյն իսկ լաց լինել բարձրաձայն, չէր համարձակւում. սկեսուրը կշտին էր. նրա լեզուն կը կտրէր անը...

Երեսխաներից մէկն այստեղ էր լաց լինում, միւսն այնտեղ:

— Ա՛նան, պլիթ \*) եմ ուզում, — ասում էր մէկը:

— Ա՛նան, բաղարջ տու ինձ, — ասում էր մի ուրիշը:

— Ա՛նան, մի կարմիր ձու էլ տու ինձ, — ասում էր երրորդը:

Ու այդպէս անվերջ:

\*) Գաթայ:

—Ձեզ մատաղ, էլ կայ ոչ. դիփ խաչին ենք տւել,—ասում էին նրանց:

—Ամենափրկիչ պապին ենք տւել է, Ամենափրկիչ պապին, որ ձեզ պահի, արտերն էլ պահի, գառներն էլ պապահ անի, հուլներն էլ. բն,—վրայ էր բերում մի ուրիշը:

Այդպէս խաբում լուացնում էին մի կերպ խեղճ երեխանց:

Ուխտաւորների քարաւանի մէջ ձիաներ ու ջորիներ այնքան էլ չը կային. մեծ մասամբ էշեր էին: Ջորի կամ ձի ունեցող ընտանիքն անգամ էշ ունէր իր հետ: Էշերը բարձւած էին ամանեղէնով ու պաշարեղէնի մնացորդով: Կային էշեր, որոնց վրա ուխտաւորներ էին նստած՝ երեխաներ, այնպիսիներ, որոնք կարող են առանց ուրիշի օգնութեան էշի վրա նստած կենալ, ու զառամեալ ծերունիներ. կնիկարմատ ոչ մի հատ. կանանց համար, բացառութեամբ փոքրիկ աղջիկների, անվայել է համարւում էշի վրա նստելը:

Պատահում էր էշ, որի վրա նստած էին լինում երեք ստահակ շարաճճի տղաներ, որոնք բզում էին խեղճին հա բզում: Էշը գլուխը կախած գնում էր մի կերպ, մեծ նեղութիւն կրելով զարիվերներում մանաւանդ:

—Փոչ կենդանիներ, ի՞նչու էք երեք հոգւով նստել. խեղճ չի բն,—ասում էր ուխտաւորներից որ և է մի հասակաւոր:

—Էշ ա. ի՞նչ ա գիտում. տաղ արած կը տանի,—ասում էին նրանք հոհալով ու շարունակում բզել խեղճ էշին:

Ոտով գնացող նրանց նման մի ուրիշ շարաճճի գաղտագողի մօտենում էր ետեց ու մի ամբողջ բուռը ձիաճանճ ածում էշի ետևի ոտների արանքը: Հեզ ու հանդարտ էշը մի բուռով հիւրստտւում էր. ցատկոտում, պապարպապար էր անում տեղը կամ քամի վերցնում փախչում՝ ազատւելու մի կերպ անտանելի ճանճերից: Նրա վրայի շարաճճիները վայնասուն էին բարձրացնում ու իրար ետևից կամ հենց երեքն էլ միասին կաթուկ տալիս էշից:

—Ձեր հախն ա, ա՛յ ձեր հախն ա. այ թա հա,—ասում էին մեծերը,—ի՞նչու էիք ահր երեքով նստում էդ խեղճի վրա:

Իրեն բզողներից ազատւած էշը վազում նետւում էր կանաչների մէջ ու գէս ու գէն թաւալում: Եթէ արտի մէջ էր թաւալում, այս ու այն կողմից իսկոյն և եթ վրա էին հասնում մեծերը ու մահակները վրա բերում խեղճին ասելով.

—Սատակես դու, սատակես. տեղը գլխիցդ կարւել ա՛, որ արտի միջին ես թաւիլ տալի՛:

Ասում էին ու մահակներն անխնայ իջեցնում ապաբախտ էշի գլխին, գաւակին, ոտներին, փորին... Խեղճը մի կերպ ազատւում էր հարւածների տարափից ու գլուխ վերցնում փախ-

չում:

Էշաթափ չարաճճիները ցաւը մոռացած վազում հասնում էին նրա ետեկից, նորից ճանկում ու նստում վրան: Էշը ճանճերից ազատւած, բայց այն չարաճճիների բզից ոչ, գլուխը կախած շարունակում էր ճամփան, քայլում ծանր, առանց որ և է աշխոյժի, խրխինջի, մոայլւած դէմքով՝ կասես մտքում իր սև օրը լինէր անիծելիս...

Ուխտաւորների էշերից հազւագիւտն էր պատահում, որ քոթակ չուտի: Ասենք իրենք էլ էին մեղաւոր. գնում էին էնպէս խելքները գըլխներին, հեզ, հանգիստ. յանկարծ շեղւում էին ճանապարհից դէպի թաւ կանաչով ծածկւած մարգագետինը կամ ծովի պէս տատանող արար ու պրանւում թաւալեւու, իսկ որ էշավարի՝ բնաւ ուշադրութեան չառնելով վրայի խուրջինը կամ գառամեալ ծերունուն... Խուրջինը շարաւում էր մի կողմ կամ հենց էշի տակոյն էր լինում. ամաններ էին շարդւում կոտրատում. ծերունին հարահուրայ անելով տապալում էր գետնին էշի հետ միասին:

Մահակներով վրա էին հասնում իսկոյն ու խելքի բերում նրան...

— Ատա սատակես դու, — ասում էին նրան, դանակոծելով անխնայ, — ի՞նչ ըլաւ քեզ ահր. շանդ քոս ա ընկել, ի՞նչ ա. քեզ ճանճով զցող չեղաւ դէ հօ:

Էշը փոշմանած կանգնում էր տեղից, կրկին ընդունում իր վրա իր բեռը ու խելքի եկած շարունակում ճամփան:

Լաւ էր, երբ խուրջիններում ամանեղէն ու պաշարեղէն էին լինում միայն. ամանեղէնի կոտորուելը թէն զայրացնում էր, բայց այնքան էլ չէր յուզում էշերին ուղեկցողներին: Պատահում էին էշեր, որոնց խուրջիններում երեխաներ էին լինում. բաձ. այդպիսի բեռներ էլ կային ուխտաւորների էշերի վրա: Խուրջիններում էին դրել երկու-երեք տարեկան երեխաների, իւրաքանչիւր կողմում մի հատ: Ի՞նչ անէին դէ. երեխաները էշի վրա նստած չէին կարող կենալ մեն-մենակ. ոտով անցնել այնքան երկար ճանապարհ իսկի չէին կարող. գրկած կամ շալակած տանելն էլ նրանց հեշտ չէր. իսկ ծրծկերներին ի՞նչ անէին: Ճարահատեալ խուրջիններում էին դրել: Ասենք երեխաներն իրենք շատ ուրախ էին խուրջինները մտնել, միայն թէ էշերի վրա լինէին ճանապարհորդած. մէկը չը կար, որը չը պահանջէր էշի վրա նստեցնել իրեն: Մօր կամ տատի առաջին ձիւ կամ շորու վրա նստած երեխան նկատելով իրենց մօտով անցնող էշին, որի խուրջինում կային զոյգ երեխաներ, յանկարծ պահանջում էր, որ իրեն էլ խուրջինում դնեն ու բարձեն էշի վրա: Երբ մերժում էին, վայնասուն էր բարձրացնում, ձաճրացնում լաց ու կոծով: Ճարները կարած դէս ու դէն

էին անուամբ, բազմութեան մէջ նրա պէս մէկ ուրիշին գտնուամ, երկուսին էլ խուրճիկում դրնուամ ու բարձուամ էշի վրա, նրա վրայի ամանեղէնի խուրճիկը ձիաներից կամ շորիներից որ և է մէկի վրա յարմարեցնելով:

Խուրճիկներում երեխաներից շատերը քրնուամ էին օրօրելուց ու այնպէս անվրդով քնած ճամփայ գնում էշերի վրա, որոնք կասես մի առանձին հաճոյքով լինէին տանելիս նրանց: Շատերը հանգիստ քնած՝ իսկի չէին իմանում՝ իրենց էշը գնում է՞ արգեօք, թէ հենց իր քէֆին արածում մօտեցած ու կանգնած ճանապարհի եզերքին, օգտւելով այն բանից, որ մեծերը գանդաղում են իր ետևում, կանգնել են պարող տղերանց նայում կամ մերձակայ աղբիւրից ջուր խմում: Երբ այդպիսի բեռ կրող էշերն էին իրենց էշութիւնն անում, գայթակղում մօտակայ փափուկ կանաչից, մարգագետնից կամ արտից, ու գնում թաւալուելու այնտեղ, տուր ու դմբոց էր, որ նրանք էին ուտում: Այդպիսի դէպքերում եթէ երեխաները քնած չէին լինում, ճշում, վայում էին իսկոյն. քնածներն էլ, էշի հետ միասին տապալուելով, արթնանում էին ու վայում իսկոյն, բայց չը նայած դրան էշից ոչ ոք չէր հրաժարւում. երբ թաւալուող տխմարին խելքի էին բերում ու կանգնեցնում, երեխաները դարձեալ պահանջում էին իրենց էշի վրա գնել:

Ուխտաւոր երեխաների ճակատներին մատաղի արիւնով խաչեր էին դրոշմւած՝ նրանց այլ և այլ փորձանքներից ապահովելու համար...

## II

Զէյրանենց Թանէան ու իր կին Հուռին բաւականին ուշացել էին ուխտատեղում. երբ նրանք Ամենափրկչի ձորից դուրս եկան դէպի իրենց գիւղը տանող ճանապարհը, ուխտաւորների շարանները չբացած էին համարեա: Շտապում էին, որ լուսով տեղ հասնեն: Գիւղը չէին գնալու, այլ գոմերը, որտեղ գտնուում էին նրանց տաւարն ու ոչխարը ու ուր ապրում էին նրանք ամբողջ ընտանիքով տարւայ մեծ մասը: Ամառն էին միայն անցկացնում գիւղում, կալ ու կուտի համար: Կալերը կալտում վերջացնում էին թէ չէ, տանով-տեղով կրկին գոմերն էին քոչում, անասունների մօտ: Գիւղից հեռու ընկած մի ձորում էր գոմերը: Մեծ չէր նրանց ընտանիքը. իրենք էին ու երեք երեխայ՝ Քոքորը, Մուսին ու Վարդին: Առաջինը դեռ ծծկեր էր. վերջին երկուսն էլ մանուկներ էին նոյնպէս, հազիւ երկու երեք տարեկան: Ուխտ էին գնացել երեխաների հետ միասին, ի հարկէ. մի գառն էին տարել մատաղ արել Ամենափրկչին. ուխտել էին այդ ամիսներ առաջ, երբ երեխաները հիւանդացել էին կարմրուկով: Գառան արիւնով խաչեր էին դրոշմել երեխաների ճակատներին: Նը-

րանք պէտք է մնային այնպէս դրոշմաձ՝ մինչև իրենց-իրենց սրբելը. օրերով երեխաներին չէին լողացնելու կամ երեսները լւանալու գոնէ:

Ուխտաւոր ընտանիքը իր հետ մի էջ ունէր միայն: Քոքորը մօր գրկումն էր, իսկ Մուխին ու Վարդին խուրճինում էջի վրա: Աման-չամանը առանձին Թանէսն իր վրա էր տանում: Բզում էր էջին Թանէսը, շտապեցնում կնոջը. բայց այնքան էլ արագ գնալ չէր լինում. էջի քայլ-լածքը ի՞նչ արագութիւն է որ...

Շատ աշխատեցին, բայց ուխտաւորների ետևից հասնել ու նրանց վերադարձի ուրախութիւններին մասնակցել չեղաւ: Բայց ինչ որ էլ լինէր, պէտք է լուսով գոմերը հասնէին՝ կովերն ու էծերը ժամանակին կթելու. հորթերն ու ուլերը ժամ առաջ դալն անելու, որ մինչև կթելը չը ծծեն իրենց մայրերին:

— Դէ հա՛, դէ հա՛. պրծի, այ աղջի,— շտապեցնում էր Թանէսն իր կնոջը,— կամաց ես գալիս. հենց էն ա մլուլ ես անում էստեղ-էնտեղ: Ահր էն հորթերն ու հուլները պէտք ա հրետին դալն անեն, որ չը ծծեն: Էս սատակած էջն էլ ա նազ անիլաւ գնում,— ասում էր բզելով էջին,— էս երբ պտենք տեղ հասնիլ էսհենց գնալով:

Ուժգին բզելուց էջը երբեմն տրանգի էր տալիս, մի քիչ տեղ վազում ու դարձեալ իր սովորական քալածքով գնում: Մուխին ու Վարդին հանգիստ քնած էին. այնպէս էին մշտում,

որ կասես փափուկ անկողնում լինէին, այլ ոչ տրանգի տուղ էջի վրայ: Քնի գիրկն ընկան Ամենափրկչից հագիւ մի վերստ անցած: Երկուսն էլ կարմրաթշիկ էին, փափուկ ու իրար շատ նման:

— Մի խնձոր են՝ միջից կէս արած էս քեր ու ախպէրը,— ասում էին նրանց տեսնողները:

Գոմերից դեռ բաւականին հեռու էին, երբ Թանէսը դարձաւ իր կնոջ ասելով՝

— Աղջի, էսհենց գնալով մենք շատ ենք ուշանալու: Դու էդ երեխին էդհենց խտտած կարճադաք արա դէպի գոմերը. էստեղից էս կէծանով քաշացի հրէ էն ձորը ու էնտեղից ծուլի դէպի կիտարի աղբիւրը. աղբիւրից դէնը ճամփէն դէ հուլաւ ճանաչում ես. էլ ի՞նչ ասեմ: Դէ, պրծի, էլ մլուլ մի անիլ: Հորթերն ու հուլները մինչև ապրանքի գալը դալն արա շուտով. կթելը երբ ըլի կը կթես. ես էլ կը գամ քոմակ անեմ. շատ չեմ ետ ընկնիլ:

— Բա էրեխէքը՞:

— Երեխանցը ես կը բերեմ էլի, էս դինջ ճամփովը. բա ի՞նչի համար եմ մնում ես էջի հետ ու բեզ կարճադաք ուղարկում:

— Դու մենակ ճնց բերես ահր,— ասաց Հուլի աքիւրը, դժլարանալով բաժանուել երեխաներից:

— Ի՞նչ ա. դաշաղները \*) գալու են ձեռ-

\*) Աւագակները:

քիցս խլէն, — ասաց դժգոհութեամբ Թանէսը, — կամ էնհենց էշի վրա թող եմ անելու ու ինքս կորչեմ. խոտակեր չեմ հօ: Էն ա էսհենց էշն առաջն արած էրեխանցը կը բերեմ գոմերը: Գու գնան, պրծի. ետես ընկնում. էն կոտորեա՞ծ հորթերն ու հուլները կը ծծեն անը:

Հուռի աքիրը կածանով իջաւ ձորը ու անհետացաւ շուտով: Թանէսը էշին բզկով շարունակեց իր ճանապարհը: Քնած երեխաները չը նկատեցին, ի հարկ է, թէ ինչպէս մայրն իրենց թողեց ու գնաց:

Արեգակը մայր էր մտել վաղուց, բայց Թանէսը դեռ ճանապարհին էր: Մութը կամաց-կամաց վրա էր հասնում: Գոմերից բաւականաչափ հեռու գեռ՝ Թանէսը յանկարծ այծերի մի խումբ նկատեց մօտակայ ցաքուտում. այծերը, փշաթփերի համեղ տերևների վրայ ըլած, չէին նկատում, ի հարկ է, որ մութն ընկնում է արդէն, ու գոմերը վերադառնալու մասին հեշ չէին էլ մտածում: Նայեց Թանէսն այծերին ու զարմացած ասաւ ինքն իրեն.

— Խիզան, էս մեր իծերն են. այ կոտորէք դուք, կոտորէք, որ էդ անտէր փշի տերևներից չէք կշտանում. բա գիտում չէք, որ տուն գնալի վախտն ա՞, — ասաւ ու շեղեց ճանապարհից դէպի այծերը:

Նրան տեսնելուն պէս այծերը խրտնեցին ու քամի վերցրին փախան, բայց ոչ դէպի ճա-

նապարհի կողմը: Թանէսը նրանց տիրոջ մեռել-կենդանը քաշելով ու նրանց ցեղն անիծելով վազեց ետևներից, իսկի չը մտածելով, որ էշին երեխաներով այնտեղ մեն-մենակ է թողել: Այծերը վազում էին հա վազում, Թանէսն էլ նրանց ետևից: Բլուրներ ու ձորակներ անցան: Մութը եկաւ հասաւ: Վերջապէս Թանէսին աշողեց մի կերպ նրանց առաջն առնել ու փոխել տալ ընթացքը դէպի գոմերը: Այծերն առաջն արած հասաւ նա գոմերը քափ ու քըրտինք մտած ու մէկը միւսից թունդ ուշունցներ թափելով այծերի գլխին: Բաւականին ուշ էր արդէն ու այնքան մութ, որ երկու քայլի վրա մարդ կամ կենդանի հագիւ էր նկատում:

Թանէսին այծերի հետ տեսնելուն պէս Հուռի աքիրը, որը կթիչը ձեռքին մօտենում էր կովերից մէկին, հարցերեց ան ու դողով:

— Բա էրեխէքը. էշը. ո՞ւր են նրանք:

— Պայ, պայ, պայ, պայ. իմ խելքն Աստոծ առնի, ոնց առել ա, — աղաղակեց Թանէսը ծնկներին տալով, — կոտորեն էս իծերը. սրանց տեսայ ետևներից ընկայ, որ դուրս անեմ ճամփէն ու հետս բերեմ. էշն էրեխանցով թողի ճամփումը. իծերը խրտնեցին ու քամի վեր կալան. ես էլ էն ա խելքս կորցրի, էս կոտորեա՞ծները ետևից ընկայ, որ գնան ոչ գէլերուց ըլեն...

Հուռի աքիրը վայել սկսեց Թանէսի հենց

առաջին խօսքերից ու սաստիկ շփոթւելով կը-  
թիչը վայր գցեց կոարեց:

— Էն սատակած էջը եկել չի բձ, — հարցրեց  
Թանէսը, չիմանալով ինչ ասի. որ էջը չը կար,  
չէ ո՞ր պարզ էր:

— Ո՞րտեղից ա եկել, քու հօր տունը քանդ-  
ւի, — ասաց Հուռի աքիրը լաց լինելով աղիողորմ  
ձայնով, — վայ էրեխէքս, վայ, ձեզ մատաղ. է-  
րեխէքս կորել են, — աղաղակեց նա մազերը փե-  
տելով:

Բոպէսպէս եկան ժողովւեցին Թանէսի գո-  
մի մօտ բոլոր գոմերաւորները. յուզմունքն ու  
իրարանցումն ընդհանուր էր: Երբ իմացան դէպ-  
քի մանրամասնութիւնները, սկսեցին պարսաւել  
Թանէսին ասելով.

— Ատա տնաշէնի մարդ, խելքդ կորցրել  
էիր, ի՞նչ ա. քարը գլուխը, թէ ի՞ձերը հանդին  
կը մնային ու գէլերոնց ըլէին. բա էրեխէքը.  
խելքօլանը էրեխանցը էջի ումիդին թող կանի՞  
բա էն մթնումը ու ինքը չոլերն ընկնի՞: Էջ ա,  
անասունք ա. ո՞վ ա գիտում, որ կողմի վրա ա  
ծուել արածելու համար:

— Ձեզ մատաղ, էլ ասիլ միք. Աստուած էն  
թիւշումը խելքս առաւ պրծաւ, — ասաց նւաղած  
ձայնով Թանէսը, — մի-մի քար վեր կալէք զըլ-  
խովս եկէք ու պնացէք երեխանցս գտէք, ձեզ  
մատաղ:

Երկար խօսելու տեղը չէր. պէտք էր շու-

տով գնալ փնտրելու երեխանց: Գոմերի շրջա-  
կաներում մշտապէս վխտացող գայլերից մէկը  
կամ մի քանիսը կարող էին հանդիպել էջին, որի  
հետ միշտ գայլերը անչափ հակառակ են... Փշա-  
քաղուով էին գոմերաւորների մազերը, երբ  
մտածում էին այդ մասին... Հենց այդ պատ-  
ճառով Հուռի աքիրն այնպիսի սուգ ու շիւան էր  
բարձրացրել, որ քիչ էր մնում, թէ քարերն ան-  
գամ լաց լինեն նրա հետ միասին՝ կասես երե-  
խաներին էլ չէր տեսնելու յաւիտեան...

— Վայ քեզ մատաղ, ա Մուխ. քու ցաւը  
տանեմ, ա Վարդ. էդ ո՞րտեղ էք հիմի, ո՞նց դըժ-  
ւար տեղ էք, ա նանը ձեր չոռը տանի, — ասում  
էր խեղճ Հուռի աքիրը փետելով մազերը:

Բանից դուրս եկաւ, որ կրկնակի դժբախ-  
տութիւն էր պատահել Թանէսի ու Հուռի աքօր  
հետ. կորել էր նաև Զէյրան կովը, որը ամենա-  
ազիզն էր կովերից, ամենակաթնատուն ու խի-  
նուկը \*). հանդին էր մնացել: Պակաս դժբախ-  
տութիւն չէր այդ. գայլերը նրան էլ կարող էին  
հանդիպել... Տունքանդութիւնը կատարեալ կը  
լինէր. Զէյրան անուն կրող կովերը Թանէսենց  
օջաղից չէին կտրուում. այդպիսիին նրանք միշտ  
ունենում էին. ծագումը մի ընտիր կովից էր,  
նրանց պապերի ժամանակներից, Որսկան Արդ-

\* ) Խինուկ ասում են իւղառատ կաթն ունեցող  
կովին:

235  
44



ման պապի դովրից, մի Աէյրանից իր նման մէկը, կատարելապէս նմանը, վերջապէս ծնւում էր ու այդպիսով անընդհատ շարունակւում էր նըրանց սերունդը: Հենց այդ պատճառով էլ Թանէսենց Աէյրանենց էին ասում:

Հարայ-հրոցով հասակաւոր գոմերաւորները, բոլորը համարեա, տղամարդ ու կին, գուրս եկան գոմերի շրջակաները՝ փնտրելու կորած մանուկներին: Աէյրանի համար այնքան էլ չէին մտատանջւում. նախ յոյս ունէին նրա սուր պողերի վրա, մէկ էլ գժութեան. Աէյրանը մի քիչ գիժ էլ էր, հիւրսոտ. մի անգամ չէր գայլերի դէմ աջողութեամբ մարանչած. գիտէին, յետոյ ի՞նչ արժէր կովը՝ երեխաների հետ համեմատած...

—Քարը գլուխը, թող կորչի,— ասում էին, — թող մենակ Աէյրանը գէլերուց ըլի ու երեխանց չարը տանի. միայն թա երեխէքը գտնեն, նրանց հետ չի փորձանք պատահի...

Կանայք լաց էին լինում ու միևնոյն ժամանակ աշխատում քաջալերել, հանգստացնել Հուռի աքօրը, որի լացն ու կոծն աննկարագրելի էր. մագերը փետելով ու ծնկներին տալով ասում էր նա մի ձէնի.

—Վայ ես ձեզ մատաղ, ա իմ կորած խիզան. ա Մուխ, ա Վարդ. ձեր չարը նանը տանի. էդ գրտեղ էք, ձեզ մատաղ... Ա՛. Ամենափրկիչ, քեզ ի՞նչ արի ահր, որ էս օյինը բե-

րար իմ գլուխը... Օխտը մատաղով կը գամ քու ոտի տակը. իմ էրեխանցը ինձ տուր, քու լիս երեսին մատաղ գնամ ես, ա Ամենափրկիչ:


Վագեցին սկսեցին որոնումներն այն տեղից, որտեղ Թանէսը թողել էր էշը երեխաներով: Փնտրեցին երկար, շատ երկար. էշի հետքերը ճրագով էին փնտրում ու տանում. արածելով գնացել կորել էր:

Լուսաբացին դուրս եկան Զարդարած աղբիւրի տախտը ու, ó ուրախութիւն, ի՞նչ տեսան այնտեղ. էշին, Աէյրանին ու Աէյրանից քիչ հեռու... մի ամենի գայլի դիակ: Պարզ էր, որ նրան անշնչացրել էր Աէյրանը իր սուր պողերով: Աէյրանի կրծքին շանգուածքներ ու ատամի հետքեր կային. հեշտութեամբ չէր տարել նա յաղթութիւնը արիւնարբու գազանի դէմ: Կովը անհանգիստ պտտւում էր դիակի շուրջը՝ ջղայնօրէն դէս ու դէն նայելով, կասես նոր յարձակման էր սպասում: Էշն անվըրդով արածում էր: Ըստ երևոյթին շատ երջանիկ էր զգում իրեն, որ այդպիսի մի խոտառատ տեղ էր ընկել պատահաբար, բոլորովին նկատի չունենալով հանդիպել այնտեղ Աէյրանին, որին իսկի չէր էլ նկատում: Խուրջինում հանգիստ քնած էին Մուխին ու Վարդին՝ գլուխները դրած փափրիկ թաթիկների վրա, խաչերով դրոշմած ճակատները բաց:

Անհուն բերկրութեամբ վրա թափւեցին նը-

րանց ու սկսեցին համբուրել ճակատների էն կարմիր խաչերը, որոնք բազմութեան խորին համոզմամբ փրկել էին կորած մանուկներին այն մեծ փորձանքից...

—Ես քեզ մատաղ, ա՛ Սմենափրկիչ, — խորին հոգեզմայլութեամբ աղաղակեց Հուռի աքերը ու առաջինն ընկաւ երեխաների վրա...



## ԱՆՏԱՌԻ ԳԻՒՏԸ

### I

Բաղիր-Իրզան մի մեծ ընտանիքի գլուխ էր: Հինգ եղբայր ունէր իրենից փոքր: Թէ ինքը, թէ եղբայրները ամուսնացած էին ու ապրում էին միասին: Բոլորն էլ երեխաներ ունէին: Մի ահագին ընտանիք էին: Երեխաները այնքան շատ էին, որ երբ հարցնող էր լինում, անուն-անուն մատներով համարում էին, համարում ու չը սրոշելով սակայն ճիշտ թիւն ասում՝

—Պէտք ա որ էսքան ըլեն: Աստու աղբաթը խէր ըլի. տալիս ա հա տալիս. հեշտ ա իմանալ, թէ ինչքան են: Էնքան շատ են, ոնց Ձէյրան-Չոլիի մորեխը: Հաց չի հերիք անում: Գիշեր-ցերեկ տափերը պոկում ենք ու պահում մի կերպ:

Մենակ Բաղիր-Իրզան ինքը տասը-տասերկու հատ տղայ-աղջիկ կունենար:

Բաղիր-Իրզանց խառնիճաղանչ քոչը բազմաթիւ չորքոտանիներով ահագին տարածութիւն էր բռնում. սարերի նեղլիկ ճամփաներում ճրգւում էր մօտ կէս վերստ: Այնքան հեռու էին ընթանում իրարից, որ հարայ տալով էին կան-

չոււմ միմեանց: Երբ իջնում էին հանգստանալու, այնքան տեղ էին բռնում, որ կասես մի գեղ լինէին, ոչ թէ մի տուն, մի օջաղ մենակ:

Նալ-թոքանի անտառի սոււերներում Բաղիր-Իրգենք հանգստացան մի ամբողջ օր: Շոգի պատճառով ճամփայ էին գնում աւելի գիշերները, որոնք պարզ էին, լուսնկայ: Իրիկնապահին մօտ չուլ ու փալաս հաւաքեցին ու ճամփայ ընկան՝ շտապով, մէկը միւսին վռագեցնելով, խառնիխուռը, հարահրոցով, երեխաների ճիչ ու լացով. մէկը շուտ, միւսը ուշ, մլուլով, քնից դեռ կարգին չը կշտացած:

Մի երկու օր էլ գնացին այդպէս ու վերջապէս հազար ու մի դժւարութիւններով հասան սարերի խորքերում կորած իրենց եայլաղը: Երեք-չորս օրում հազիւ կարգի բերին իրենց ու նոր միայն ուշքի եկան տեսան, որ երեխաներից մէկը չը կայ. այնքան էին խառնւած, շողւած, այնչափ գլուխները կորցրած ու լոյսն ու մթինը աչքներից գցած, որ երեխայի բացակայութիւնը չէին նկատել այդքան ժամանակ. ո՞վ հնար ու ժամանակ ունէր մտիկ տալ՝ թէ երեխաներից որն է տեղը, ո՞րն է պակաս:

Իրար անցան, դէս ու դէն ընկան իսկոյն. քրքրեցին եայլաղի մօտակայ շրջականները, տակն ու վրա արին սարերը, ձորերը, անտառներն ու գիւղերը հարց ու փորձ արին ամեն մի հանդիպողի. երեխան չը կար ու չկար: Պարզ էր, որ

նա կորել էր, ճանապարհին էր մնացել. քնած էնպէս թողել մոռացել էին նրան: Բայց սրտեղ, սր իջեանում: Մի փոքրիկ, երկու տարին հազիւ բոլորած աղջիկ էր կորած մանուկը, անունով Հիւրգաթ: Բաղիր-Իրգայի «կրտսւրտանքն» էր, այսինքը ամենափոքրը նրա բազմաթիւ զաւակներից: Երբ Հիւրգաթի կորուստը պարզեց, կանայք ու երեխաները, նրա մայր Սանամը մանաւանդ, աննկարագրելի սուգ ու շիւան սկսեցին. վայեցին այնպէս, որ քիչ էր մնում, թէ քարերն էլ նրանց հետ միասին լաց լինեն: Ո՞վ էր իմանում, որ ձորում է մնացել, որ անտառում կամ որ սարի լանջի՝ մեն-մենակ, անաէրանաէրուչ. լաց է լինում, իր նանին կանչում, բայց նանը հեռու է, հեռու, նրան չէ լսում...

— Տագարէք, ձեր հէրն անիծած — բարկանում էին տղամարդիկ ողբացող կանանց վրա, մեծ դժւարութեամբ զսպելով իրենց արաստուքը, — խոտակեր անասունը ձեզանից լաւ ա. իր ձագը երբ ետ ա մնում, բառանչում ա, կանչում, գանում: Դուք ճամփայ էիք ընկնում իսկի չականելով երեխանց: Հենց էն ա գլուխներն ու արևներն էիք հողում, երբ լաց էին լինում. խուրջիները ըն էիք ածում էշերի ու եգների վրա բարձում ու ձեր քոռ աչքերով մի կարգին մտիկ չէիք տալիս տեսնէք՝ թամամ են երեխէքը, թէ պակաս: Հիմի լաց ըլէք էգհենց. ջանահան ըլէք, կոտորւեցէք, ձեր հախն ա...

Փոքրիկ Հիւրդաթը կորել էր Նալ Թոքանի անտառներում. մի թիթեռնիկի ետևից ընկած էր գուցէ գնացել դէպի անտառի խորքը կամ հենց այնպէս էր հեռացել քնած քոչւորներին: Գնացել էր, գնացել ու պատահել մոռի թփերի, յափշտակել էր նրանց մուգ կարմիր հասած համեղ պտուղներով, կերել, կերել մի կուշա ու հենց այնտեղ խիտ թփերի մէջ, փափուկ մամուռի վրա մեկնել քնել: Նրան մոռի թփերի մէջ մուշ-մուշ քնած գտան հետևեալ օրն առաւօտեան մի քանի հայ տղէք, որոնք մոռ քաղելու էին գնացել Նալ-Թոքանի անտառները: Զարմացան անչափ: Դէս ու դէն նայեցին. ամայութիւն էր ամեն տեղ: Տղէքն իսկոյն հասկացան, որ երեխան քոչւորներից է շեղւած ու մոռացւած այնտեղ. հասկացան նաև, որ թուրք երեխայ է, քանի որ հայ քոչւորներ այն վայրերով չեն անցնում երբէք:

Երեխան քնած էր այնքան քաղցր, որ տղէքըն ամսոսացին արթնացնել: Նստեցին մօտը ու սպասեցին այնչափ, որ երեխան ինքն իրեն արթնացաւ: Զարմանալի բան է. նա չը վախեցաւ բոլորովին. բացեց աչքերը ու քուն ու քուն նայեց տղերանց. քիչ-քիչ ուշքի եկաւ ու անթարթ աչքերը բեռեց նրանց վրա: Տղերանցից մէկը կանփեա ունէր. իսկոյն հանեց զրպա-

նից մի ամբողջ բուռը ու մեկնեց երեխային: Նա անվճարար վերցրեց մի հատ ու ժպտաց: Այդ ըսպէից տղէքն ու մանուկ Հիւրդաթը մըտերմացան: Տղէքը թղթահան էին անում կանփեաները ու մին-մին ուտեցնում: Մեծ հաճոյքով էր ուտում Հիւրդաթը կանփեաները ու ժպտում. անկապ-անկանոն բառեր էր թոթովում թուրքերէն, երբ գտնողները աշխատում էին նրան խօսեցնել: Ոչինչ չէր կարելի իմանալ նրանից, նոյն իսկ նրա անունը:

Տղէքը թողեցին մոռ քաղելն ու աղջկան խնամքով զրկած իջան գիւղը:

Ճանապարհին տղերանցից մէկն ասաց յանկարծ՝

— Էս թուրքի էրեխին ի՞նչի համար ենք գեղը աանում, է:

— Բա ի՞նչ անենք, — հարցրեց մանուկին զրկած տղան:

— Գիտում չեմ:

— Դէ որ գիտում չես, տազ արա: Ի՞նչ ա. էս խեղճ մանուկին պէտք ա անտէր-անտերուչ էստեղ թող անենք գնանք: Գազանն էդ կանի. մենք մարդիկ ենք, հայ քրիստոնէք ենք:

— Անմեղ մանուկ ա, Աստծու ստեղծած ա,

— մէջ մտաւ տղերանցից մի ուրիշը, — Դնց անենք, թէ թուրքի ա. թուրքը մարդ չի, ի՞նչ ա:

Տարակուսանք յայտնող տղէն մի քիչ լուռ մնաց, յետոյ զղջաց կարծես ու մօտեցաւ, սկսեց

փայփայել Հիւրգաթին, շոյելով նրա փափրիկ կարմիր թշերը:

## III

Տղերանց գիւտը հետաքրքրութիւն պատճառեց ամբողջ գիւղին: Այն տունը, ուր տարել էին երեխային, շուտով լցւեց մարդկանցով, մեծ մասամբ կանանցով. գալիս էին հա գալիս տեսնելու գտած թուրք երեխային: Շատերը կամփետ ու շամիչ էին բերում իրենց հետ: Փոքրիկը բոլորին էլ ժպտում էր, մանաւանդ երբ տեսնում էր կամփետն ու շամիչը, որոնցից շուտով մի մեծ կոյտ գոյացաւ նրա առաջին: Բաւեր էին թոթովել տալիս նրան ու հրճուում. ամենքը ցաւակցում էին նրա վիճակին, ցաւակցում անկեղծօրէն: Կանանց աչքերից արտասուքի կաթիլներ էին գլորւում: Նայում էին, նայում ու ասում վշտացած.

— Է՛, հիմի դրա մէրը արին ա լաց ըլում ու տափերը պուկում դրա համար:

— Է՛, հիմի, ո՞վ ա գիտում, սար ու ձորն ընկած վայ բալա կանչիլով ման ա գալիս դրան էն գամեռը:

— Նրա գլուխը հողեմ, նրա գլուխը. քոչը ճամփայ ընկնելիս էն խի՞ չի մի լաւ մտիկ տւել տեսնայ էրեխեն կայ, թէ չէ: Հիմի թող պոչերը պուկ տայ:

— Աղջի, ասիլ մի. էն գետատարին, ո՞վ ա գիտում, ինչքան ցաւ ու ցեց ա ըլել ճամփին: Քոչի էգափը շատ ա ըլում. տեսած եմ. քոչ գնալիս ամենաաչքաբաց մարդն անգամ իրան կորցնում ա ու լիսն ու մթինը աչքից գցում:

Մանուկի համար իսկոյն տէր գտնւեց. գիւղի ունւորներից մէկն էր, Քիքունց Վարդան ամին: Ինքն ու կինը լսելուն պէս եկան տեսան երեխին, հաւանեցին անչափ ու ասացին հրճանքով.

— Տղէք, ձեզ մատաղ. էդ ինչ լաւ գատ էք գտել. ապրէք, որ համ գտել էք, համ բերել: Դէ էդ ա էդ էրեխին Աստուած ինքն ա մեզ համար ուղարկել. էսօր երեսուն տարի ա մենք պսակւած ու էրեխից զուրկ: Կը տանենք, կը պահենք. կը մեծացնենք ոնց մեր էրեխին: Հը՞, ի՞նչ էք ասում, ա խալխը, — դարձաւ Վարդան ամին ժողոված բազմութեան, որի մէջ էին նաև գիւղի տանուտէրն ու քահանան:

— Ի՞նչ պտենք ասիլ դէ, Վարդան ամի, — ասացին բազմութեան միջից, — էդ ըախէն շատ բախտաւոր ա էլի. գտել են, բաւական չի. հիմի էլ քեզ պէս վարլու մարդի տուն ա ընկնում: Տար, ի՞նչ ենք ասում. դրուստ որ քեզ համար ա ուղարկել Աստուած դրան:

— Ես պէտք ա օրէնքին յայտնեմ, հրապորտ \*) տամ պրիտաւին, — ասաց տանուտէրը:

\*) Յայտարարութիւն:

—Իմ խաթրին էդ անիլ մի, —ասաց Վարդան ամին,—էս էրեխին ես ու իմ կնիկը մեր աչքի լիսի պէս պիտի պահենք. Աստուած սրան էն ա մեզ համար ա ստեղծել. թէ հու չէ, էս հենց բան չէր պատահիլ: Համ էլ, մալում ա անում, սրա ծնողները սրանից շատ ունեն, որ սրան աչքաթող են արել, մտրներիցը զցել ու զնացել:

—Հրապորտը տալ մի, հրապորտը տալ մի, —աղաղակեցին այս ու այն կողմից,—խեղձ ա Վարդան ամին. թող էդ էրեխէն դրան մնայ. մարդ ու կնիկ էրեխի հասրաթ լինելուց կոտորւում են թամամ:

—Բա որ պրիստաւը լսի ու ինձ պատժի, որ յայտնել չեմ,—ասաց տանուտէրը:

—Մենք կը խնդրենք քեզ համար,—ասացին,—Վարդան ամու խաթրու պրիստաւը քեզ կը բախշի. ո՞վ ա գիտում. դեռ շնորհակալութիւն էլ կը յայտնի, որ էս էրեխի համար տէր ա գտնւել էս գեղումը:

—Բա որ էդ էրեխի հէրն ու մէրը լսեն ու գան տանելու, էն վախան ի՞նչ կասէք,—ասաց տանուտէրը:

—Ի՞նչ պիտի ասեմ,—լսուեց Վարդան ամին,—կը խնդրեմ, որ էրեխին թողեն ինձ մօտ. երբ ընդունեն ոչ, կը տամ իրենց. ի՞նչ պիտի ասեմ որ...

—Հաւ. դէ տազ կանեմ հլա,—ասաց տանուտէրը:

—է, ես ու մեր կնիկը էս էրեխին ո՞նց պիտի պահենք, ո՞նց,—ասաց Վարդան ամին, իր զիրկն առնելով աղջկան—հէրն ու մէրը որ գան տեսնեն սրա ապրուստը, տանիլ չեն, մեզ կը բախշեն, հաւատացած եմ: Ա՛ տէր, եկող կիրակի օրը կը մկրտես էրեխին,—զարձաւ քահանային,—սաղ հասարակութիւնը պէտք ա հացին կանչեմ:

—էդ մի քիչ դժւար բան ա, Վարդան,—ասաց քահանան,—մկրտենք ու յանկարծ ծնողները գան ուզեն: Մկրտած էրեխին ո՞նց տանք նրանց, իսկ նրանց ձեռքից ո՞նց պրծնենք: Լաւն էն ա մի քանի ամիս սպասենք, մինչև քոչերը սարերից իջնելը: Երբ մինչ էն վախտը էրեխին տեղաք տւող չըլի, կը նշանակի Աստուած դրան քեզ համար ա ստեղծել: Էն վախտը մի փառաւոր մկրտութիւն կանենք: Իսկ հիմիկուց անունն էնհենց դնում եմ՝ Շողակաթ: Էդ նշանակում ա, որ էդ էրեխէն արևի շողերի հետ միասին երկրնքից կաթել ա քեզ համար,—ասաց տէր հայրը ժպտալով:

—Փառաւոր ըլես, ա՛ տէր, լաւ անուն դրար, ասաց Վարդան ամին,—դէ ոնց հրամայում ես, էնհենց կանեմ, կը սպասեմ. գուցէ իմ բախտից Աստուած էս էրեխին ինձ բախշի:

— Ամէն, ամէն, — աղաղակեցին բազմութեան միջից:

— Աղջի, — դարձան Վարդան ամուսնու կին Ոսկի աքօրը կանանցից մի քանիսը, — էրեխէն թուրքի ա հըր. մի հանգի սազում չի, որ թամամ քունը շինես:

— Գլխնիդ հողեմ, — սոսայ դժգոհութեամբ Ոսկի աքիրը. — ամենքդ մի սուրու էրեխայ ունէք. ուզում չէք, որ մինն էլ ինձ լինի: Շատ լաւ սազում ա: Էնհենց պիտի պահեմ, ոնց ինձանից ծնւածի:

— Ախր էրեխէն թուրքի ա է, Ոսկի աքիր. նրանում հայի արին չը կայ: Ինչքան էլ չը լի, խորթ աչքով մտիկ կը տաս:

— Ի՞նչ անենք թուրքի ա. չէ որ Աստծու ստեղծած ա: Էդ ինձ բոլ ա. հոգուս պէս կը պահեմ, — սոսայ Ոսկի աքիրը, — առնելով աղջկան Վարդան ամուսնու գրկից:

Մարդ ու կին անչափ երջանիկ էին իրենց անակնկալ գիւտով:

Ոսկի աքիրը նրան խնամքով գրկած տարաւ իրենց տուն, ճանապարհին անվերջ բարեմաղթութիւններ լսելով: Վարդան ամին բազմութեան մէջ գտնւող հասակաւոր մարդկանց տարաւ իր տուն արաղ տալու՝ բախտաւոր դէպքի առիթով: Գիւտն արած տղերանց բաւականին գրամ բախշեց ասելով.

— Տղէք, շատ ապրէք. գնացէք մի լաւ քէֆ արէք:

## IV

Վարդան ամուսնու Ոսկի աքօր երջանկութիւնը շատ կարճատե եղաւ սակայն: Շողոկաթ-Հիւրդաթին վիճակած չէր նրանց աղջիկը դառնալ: Դէպքից հազիւ մի տասը-տասներկու օր անցած մի օր վաղ առաւօտեան գիւղը թափեցին մի խումբ թուրքեր՝ աղամարդիկ ու կանայք, մեծ մասամբ կանայք. մօտ տասնհինգ հոգի կը լինէին: Կանայք սպալով մտան գիւղը: Տղամարդիկ հանգստացնում էին նրանց ասելով.

— Տաղ արէք, լալկեցէք. խայտառակիլ միք մեզ էս գեղումը ձեր վայնասունով: Էն ա էրեխէն որ էստեղ ըլի, կը տան էլի, թագցնիլ չեն. սուս կացէք:

Բայց կանայք չէին լսում: Մէկը վայում էր ամենից բարձրաձայն: Նա խելագարի էր նման. տալիս էր ծնկներին, փետում մագերն աղաղակելով.

— Վայ բալւ, վայ իմ կորած բալւ, էդ սրտեղ ես:

Պարզ էր, որ Հիւրդաթի ետեից էին եկել. դէս ու դէն ընկնելով իմացել էին վերջապէս, որ երկաթաշէնցի տղէքը մի էրեխայ են գտել Նալ-Թոքանի ծմակներում: Ողջ գիւղը թափեց

իսկոյն եկեորները գլխներին: Բոլորն էլ կարեկցում էին նրանց ու հանգստացնում ասելով, որ իրաւ երեխան իրանց գիւղումն է, մի «դովլաթլու\*» մարդի տան, որտեղ նրան աչքի լոյսի պէս են պահում:

Թուրքերն ու թրքուհիները բազմութեան առաջնորդութեամբ գնացին Քիքուկն տունը:

Երեխան իր մօրը տեսնելուն պէս մի ակընթարթ ապշած նայեց նրան ու նետուեց ընկաւ գիրկը: Այնպէս կպաւ նրա կրծքից, որ էլ ոչ մի ուժ չէր կարող բաժանել նրանց:

— Հիւրգաթ, Հիւրգաթ, — խելագարի պէս աղաղակեց մայրը նրան տեսնելուն պէս:

Ներկայ եղողներէից շատերի աչքերից արտասուքի կաթիլներ գլորուեցին:

Վարդան ամին տխուր ձայնով ասաց ինքն իրեն.

— Հէջ. էս էրեխէն մեզ նասիբ չեղաւ: Չեմ իմանում, որ մեղքիս համար ա Ասուած էսքան բարկացել մեզ վրայ:

Ոսկի աքիրն աւելի սրտակոտոր եղաւ. իր օրում այնչափ վշտացած չէր:

Երբ նա Հիւրգաթի ծնողներէից իմացաւ, որ նրանք բազմաթիւ զաւակներ ունեն, որոնցից վեցը տղայ են, հինգը աղջիկ, դարձաւ Սանամ

\*) Հարուստ, մեծատուն:

բաջուն, Հիւրգաթի մօրը ասելով՝

— Աստծու տունը շէն կենայ, *ն* բաջի \*). քեզ էդքան տւել ա ու էլ կը տայ. ինձ մինն էլ չի տւել. Հիւրգաթին մեզ բախշի. խեղճ եկ ինձ ու մարդիս: Մեր հոգու պէս կը պահենք: Աշնա \*\*)

կը դառնանք ձեզ հետ. կը գաք տեսնէք՝ ինչքան սրտներդ կուզի. մենք էլ ձեր տունը դոնաղ կը գանք: Հիւրգաթը կը բախտաւորւի մեզ մօտ: Փառք Աստծու, դովլաթլու օջաղ ենք. դիւի դրան ա մնալու. թող, բաջի, թող Հիւրգաթին ինձ մօտ:

Սանամ բաջին դողում էր Ոսկու աքօր ամեն մի խօսքից՝ կասես ուժով խլելիս լինիին իրենից իր զաւակին:

Յետոյ, աղջկան ամուր գրկած, Սանամ բաջին գլուխը վեր բարձրացրեց և յուզւած ձայնով ասաց.

— Էրեխէք շատ ունեմ, *ն* բաջի, դրուստ ա. ամա սն էլ անրանց պէս սրտիս կտորը. ես ո՞նց կարեմ սրան սրտիցս ու տամ քեզ...  
Ու այնպէս լաց եղաւ, որ բազմութիւնը աչքները վար յառած՝ նրա հետ սկսեց արտասուել:

— Տագ արն, *ն* կնիկ, էլ բան մի ասի,—

\*) Քոյր:


\*\*) Բարեկամներ:

խօսեց Վարդան ամին, – տասը չի, որ քսանն էլ  
ունենայ, էլի էն էրեխէն նրա սրտի կտորն ա.  
չի կարի մեզ տայ: Դէ էսհենց ա մեր բախտը.  
տազ արա:

Ոսկի աքիրը տազ արաւ. տազ արաւ, խեղ-  
դելով սրտում մորմոքիչ վիշտը:

Նա տաք համբոյրներով ու դառն արցունք-  
ներով բաժանւեց ընդ միշտ «իր Շողակաթից»,  
տալով նրան և այն գեղեցիկ շորերը, որ մեծ  
խնամքով ինքը իր ձեռքով կարել էր, և Վարդան  
ամու գնած սիրուն փափուկները, խաղալիքները,  
քաղցրաւէնիքը...

Ոսկի աքօր ու Վարդան ամու յիշողութեան  
մէջ Շողակաթ-Հիւրգաթը մնաց ինչպէս մի քաղցր  
կարճատև երազ:



4508

*[Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page]*



0008827

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0008827

**“ՆՒԷՐ ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ”**  
**ԸՆԿԵՐՈՒԹԵՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ**

Խմբագրութեամբ «ՀԱՍԿԵՐ» ամսագրի

1. Գատցուկ—Ամիրան Դարեշանիձէ, փոխ. Աթ. Մնկոյեանի . . . . . 25 կ.
2. Սէյրի—Դերձակի աշակերտը, Վոզրէլի . . . . . 10 »
3. Ազւէն ու պուտուկը, Ոսկի ձկնիկ, Գասկ—  
պասկ—պատկերազարդ հեքիաթներ . . . . . 10 »
4. Ս. Դալաչեան — Կապիկներ, ընագիտական  
զրոյց . . . . . 10 »
5. Մարկ Տէլն—Մահւան օղակը. պատմւածք,  
Քարգմ. Մ. Քաւաքալեանի . . . . . 7 »
6. Կ. Ստանիկովիչ—Գատիկ նաւաստին. պատ-  
մւածք, Քարգմ. Սիմակի . . . . . 5 »
7. Մարգար Աւետիսեան—Երկը խրատ. Պզնձէ  
բաղաբի զրոյցներից . . . . . 20 »
8. Ի. Սէտուն-Տումպուն—Ինիպեզի զայլը. պատ-  
մւածք հերոս կենդանիների կեանքից, Քարգ.  
Սիմակի . . . . . 20 »
9. Լ. Պրայս եւ 2. Զիլբերտ—Առասպելական հե-  
րոսներ. Քարգմ. Գ. Իփէկեան . . . . . 20 »
10. Ռուբէն Դարբիշեան—Ովկիանի թաղաւորը.  
Կէտի մասին, ընագիտական զրոյց . . . . . 10 »
11. Մարգակերի աղջիկն ու խորհրդաւոր վար-  
պետը. Իտալական հեքիաթ. Ռուսերէնից  
Քարգմ. Յովհ. Քումանեան . . . . . 10 »
12. Խ. Բ. Բաքալեան—Նոր ընկերուհի, Մանկա-  
կան պիէս, մէկ արարւածով . . . . . 10 »
13. Գ. Մեսեան—Ոսկեպոզը, արեւելեան աւան-  
գութիւն . . . . . 10 »
14. Փր. Փոլս—Մի ժամայ նախարարը,  
պատմւածք Քարգմ. Աթ. Մնկոյեանի . . . . . 15 »
15. Զիպօն եւ Պիպօն . . . . . 25 »
16. Բ. Նիպպինգ—Կոտուկօ, պատմւածք Քարգմ.  
Նիկ. Մարգսեան . . . . . 15 »
17. Դը-Ամիրչիս—Կարմիր մեխակ, պատմւածք,  
Քարգմ. Բ. Վարդանեան . . . . . 8 »
- 18 Աղաբար—Քուխար մանկական հեքիաթ . . . . . 12 »
19. Սօֆիս Դալաչեան—Այգեպանի մօտ . . . . . 10 »
20. Ուրդա—Տափաստանը պատմւածք . . . . . 10 »
- 21 Ս. Տէր-Աւետիսեան — Ուխտաւորները, Ան-  
տաար գիւար . . . . . 8 »

Գիմել «Հասկերի» խմբագրութեան. Тифлись,  
 редакция „Аскеръ“

Զի յաւերած «ՀԱՍԿԵՐ» ամսագրի